ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

13 հունվարի 2014 թվականի N 2-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ « ՄՈՒՑՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետի ա/ ենթակետով և հիմք ընդունելով «Մուցքի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն՝ Գ. Խուդավերդյանի գրավոր դիմումը, **կ ա ր գ ա դ ր ում ե մ՝**

1.2014թ. հունվարի 14-ից լուծել «Մուցքի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Գնել Խուդավերդյանի հետ 2011 թվականի հոկտեմբերի 12-ին կնքված N 16 աշխատանքային պայմանագիրը:

Հիմք՝ Գ. Խուդավերդյանի անձնական դիմումը, ՀՀ աշխատանքային օրենսգրքի 112-րդ հոդված, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետի ա/ ենթակետ:

2.2014թ. հունվարի 14-ից «Մուցքի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնակատար նշանակել Կարեն Սարգսյանին մինչև ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնի համար մրցույթի անցկացումը:

Հիմք՝ Կ. Սարգսյանի անձնական դիմումը:

3.Կազմակերպությունում ակտիվների և պարտավորությունների գույքագրում, հանձնում-ընդունում կատարելու համար ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով.

Գրիգորյան Արսեն	աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի պետ (հանձնաժողովի նախագահ)
Հարությունյան Գալյա	աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի առաջին կարգի մասնագետ
Սարգսյան Կարեն	«Մուցքի հիմնական դպրոց» ՊՈԱԿ տնօրենի պաշտոնակատար (ընդունող)
Խուդավերդյան Գնել	«Մուցքի հիմնական դպրոց» ՊՈԱԿ նախկին տնօրեն (հանձնող):

4. Հանձնաժողովին՝ գույքագրման և հանձնման-ընդունման աշխատանքներն ավարտել 3-օրյա ժամկետում և արդյունքները ներկայացնել քննարկման:

5.ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին, ապահովել սույն կարգադրությունից բխող անհրաժեշտ միջոցառումների իրականացումը:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ ***Վ. ՀԱԿՈԲՅԱՆ***

2014թ. հունվարի 13
ք. Կապան